Ուսուցիչը պիտի ջանայ աշակերտուհուն սովորեցնել եւ կրթել ամաչեցնելով կամ ամենաչատը՝ պատժելով։ Իսկ եթէ այդ ամենից յետոյ՝ աշակերտուհին, իր «գողող բնաւորութեան» հետեւանքով, կը մնայ այնուամենայնիւ անուղղայ, այդ դէպքում ուսուցիչը կարող է նրան ծեծել, բայց միայն կնոջ ձեռքով, հասցնելով «մինչեւ 9 զամչի եւ միշտ ըզդոյշ լինելով, որ «չխաթարուի նրա պատկերը», որ «չկոտրուին ոսկրները» եւ «անփարատելի վախը չընկնի նրա սիրտը, որը կը զրկի նրան որդեծնութիւնից» (յձբ)։

Շահամիրեանը կնոջ եւս թոյլատրում է, տղամարդուն հաւասար, ժառանգութիւն ըստանալու, չափահասութեան հասակը երկսի համար էլ այդ դէպքում 21 տարին դնելով (ճձդ)։ Կինը կարող է վկայ լինել (միբ), բայց երաշխաւոր՝ ո՛չ (մբ)։ Եթէ նա ամուսնացած է եւ ամուսինը ներկայ, չի կարող մուրհակ տալ (ճղդ)։ Իսկ եթէ ամուսինը առեւտրական գործով բացակայ է, նա կարող է մուրհակ տալ, բայց մի տարուան ընթացքում 200 արծաթ դահեկանից ոչ աւելի (ճղե)։

Միւս հասարակական կատեգորիան, որի վիճակը նոյնպէս շատ է զբաղեցնում Շահամիրեանին — դա մարդկութեան ընդհանրապէս այն թշուառ հատուածն է, որը դատապարտուած է, մանաւանդ անքաղաքակիրթ երկրներում, ուրիշների վրայ ծանրանալու եւ նրանց հաշուով ապրելու — ծերերը, պառաւները, կաղերը, կոյրերը, անդամալոյծները, հիւանները, աղքատները եւ բոլոր նման տարրերը, որոնք չունեն — ինչպէս հեղինակն է ասում — «իրենց մխիթարող որդիներ կամ աղջիկներ» (ճկա)։

Այդպիսիներին «մխիթարում է» հայոց տունը կամ հայոց պետութիւնը, որը իր վրայ է վերցնում ոչ միայն նրանց անունդը, այլ եւ պահպանութիւնը, խնամքը, բժշկութիւնը, դեղերը եւն.։ Պետական բիւդջէի մէջ այդ նպատակով ամէն տարի մացւում է, 3 տարբեր յօդուածներով, 300,000 դահեկան, որից ծախս «տան ուկսոաց» — 100,000 դահեկան, «ծախս դեղօրէից եւ վարձ բժշկաց» — 100,000 դահ. եւ «ծախս տան աղքատաց եւ տնանկաց» — 100,000 դահ.։

Գործի ղեկավար մարմինը 3 հոգուց բաղկացած կոլեգիան է, ընտրուած Ազգ. Ժողովից։ Իւրաքանչիւր նահանգում, գլխաւորապէս նահանգի կենտրոնում, կոլեգիան պահում է համապատասխան տներ տկարների, որբերի, բորոտների եւն. համար։ Այդ տները, յաճախ նաեւ ամբողջ գործի կազմակերպութիւնը, կոչւում են «տուն ողորմութեան»։ Ամէն մի «տուն ողորմութեանը» կառավարւում է 7 հոգուց կազմուած մի մարմնով, որոնք ընտրւում են 3 տարով եւ հաւանօրէն խնամատարութեան կոլեգիայի կողմից (ճիբ)։ Նրանց գլխաւոր հասոյթը գոյանում է տուգանքներից. պետական բոլոր տուգանքները գանձւում են «տուն ողորմութեան» անունով։ Անգամ անհատները իրաւունք չունեն փողոցի մուրացկաններին, աղքատներին առանձին ողորմութիւն տալու. նրանք իրենց ցանկացած ողորմութիւնը տալ կարող են միմիայն «տուն ողորմութեան» միջոցով (ճիը)։

Որպէս լրացումն այս գլխի՝ բերենք երկու հետաքրքրական օրէնք եւս, որոնց նպատակն է, անշուշտ, զարկ տալ հայ ժողովրդի աճեցմանը.—

1. Եթէ մէկ ամուսնութիւնից ծնողներն ունենում են 12 որդի, սրանց հայը — օրական 12 հաց — ծնողները, իրենց կենդանութեան ամբողջ ընթացքում, ստանում են պետութիւնից (մզ)։

2. Հանրապետութեան ամէն մի նոր նախագահը, իր պաշտօնի կոչուելու սկզբին, ուրեմն երեք տարին մի անգամ, ուղարկում է բոլոր կուսանոցներն ու վանքերը 12 հոգի, «խոհեմ, հեզ, երկայնամիտ եւ հասակաւ լիքն, իբրեւ հալեւոր» մարդիկ։ Սրանք իւրաքանչիւր վանականին ու կոյսին զաղտնի խոստովանեցընելով, պէտք է իմանան, թէ արդեօք նրանք չե՞ն ցանկանում թողնել վանքը եւ աշխարհ մտնել։ Ցանկացողների թղթով այդ 12 հոգին վերադառնում են հանրապետութեան նախագահի մօտ եւ սա յատուկ գրութեամբ խնդրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ այդպիսիներին ազատ արձակել եւ թոյլ տալ ամուսնանալու (յձզ)։

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԷՆՔՆԵՐ

Շահամիրեանը, որ ամենայն խնամքով աշխատում է նախատեսնել ապագայ Հայաս-